ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«____» _____ 2015թ. N _____-Ն

ք. Ստեփանակերտ

ԲԵՐՔԱՀԱՎԱՔՆ ԱՆԿՈՐՈՒՍՏ ԵՎ ԿԵՐԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԴԱՇՏԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել բերքահավաքն անկորուստ և կերերի կուտակման գործընթացը կազմակերպելու համար համայնքային դաշտամիջյան ճանապարհների բարեկարգման միջոցառումների իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ համայնքային դաշտամիջյան ճանապարհների բարեկարգման միջոցառումների ավարտից հետո մեկամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունն ներկայացնել հաշվետվություն՝ կատարված աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի _____-ի
N _____ -Ն որոշման

ԿԱՐԳ
ԲԵՐՔԱՀԱՎԱՔՆ ԱՆԿՈՐՈՒՍՏ ԵՎ ԿԵՐԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԴԱՇՏԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի անկորուստ և կերերի կուտակման գործընթացի կազմակերպման ուղղված համայնքային դաշտամիջյան ճանապարհների բարեկարգման միջոցառումների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ***համայնքային դաշտամիջյան ճանապարհների բարեկարգման միջոցառում (այսուհետ՝ միջոցառումներ)***՝ համայնքային դաշտամիջյան՝ համայնքներից դեպի ցանքատարածքներ և խոտհարքներ տանող ճանապարհների եզրերի բուսականությունից մաքրման և բարեկարգման (նորոգման) աշխատանքների իրականացումը.

2) Միջոցառումների ***մասնակից***՝ միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված պետական և տարածքային կառավարման մարմինները:

II. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված պետական կառավարման և տարածքային կառավարման մարմինները իրականացնում են հետևյալ միջոցառումները՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) բերքահավաքի ընթացքում համակարգում և վերահսկողություն է իրականացնում միջոցառումների իրականացման գործընթացի նկատմամբ.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերը ձեռնարկում են անհրաժեշտ միջոցառումներ համայնքներից դեպի ցանքատարածքներ և խոտհարքներ տանող ճանապարհների եզրերի բուսականությունից մաքրման և բարեկարգման (նորոգման) աշխատանքների իրականացման ուղղությամբ:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերը յուրաքանչյուր տարվա համար՝ նախարարության սահմանած ժամկետներում նախարարությունն և Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունն են ներկայացնում տեղեկություններ՝ նշելով միջոցառումների իրականացման գործընթացքում իրենց կողմից ձեռնարկվելիք աշխատանքների կատարման տեղանքը, ծավալը, ժամկետները և անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը:

5. Միջոցառումների ֆինանսավորման համար հիմք են հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից սույն կարգի 4-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունն ներկայացվելիք տեղեկությունները:

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում միջոցառմամբ նախատեսված միջոցներից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերին հատկացնում է համապատասխան ֆինանսական միջոցներ:

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերը՝ միջոցառումների ավարտից հետո տասնօրյա ժամկետում նախարարությունն են ներկայացնում տեղեկություններ՝ կատարված աշխատանքների տեղանքի, ծավալի, ժամկետների և ծախսված ֆինանսական միջոցների մասին:

III. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

9. Միջոցառումների իրականացումից ակնկալվում է՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում բերքահավաքի անկորուստ կազմակերպում.

2) հրդեհներից խուսափում.

3) կերերի կուտակման գործընթացի սեղմ ժամկետներում ավարտ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ